ԼԱՆՋԻԿ

Նախկինում՝ Մուսլուխլի, Մուսլուղլու և նման այլ անուններով հայտնի ներկայիս Լանջիկ գյուղը գտնվում է Մարալիկի տարածաշրջանում, մարզկենտրոնից 35կմ հեռավորության վրա: Վաղ հնագիտական հուշարձաններից հատկանշելի են մ.թ.ա. II-I հազարամյակների ամրոցների, բնակատեղիների, դամբարանադաշտերի մնացորդները: Միջնադարյան հուշարձաններից են գյուղից 1կմ հարավ գտնվող «Փարաքար» գյուղատեղն ու տարբեր դարերին հարազատ գերեզմանոցները: Գյուղի մեջ է 1908թ. կառուցված Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցին: Այստեղ է գտնվում նաև XIX դ. «Կենաց Խաչ» մատուռը, որի շուրջ պահպանվել են նաև գյուղատեղիի ավերակներ ու գերեզմաններ:

Նորակառույց «Զարիաթ» սրբատեղում կա մի խոյատապան, որի դիմաց նաև՝ հարթ տապանաքար. երկուսն էլ արձանագիր են, սակայն, անկապակից:

9*. ԽՈՅԱՏԱՊԱՆ. սրբատեղի մեջ, գիրը՝ հակառակ դիրքով, միատող.



ԸՍՏ ՀԻՆ ԹԱՍ:

Ծանոթ. *Տապանաքարի ձևն ու տառերի հնագրությունն առավել հարազատ են XVI-XVII դդ.:*

10*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ ուղղանկյունաձև, 3 տող.



ԱՅՍ / ՅՈՒ / ՍՈՐԵՄԱԿ:

Ծանոթ. *Արձանագրությունն անվարժ գրչի ձեռքով է գրված, բացի այդ քարի մակերեսը խիստ մաշվել ու մասամբ ջարդվել է, ինչի հետևանքով գիրն անընթեռնելի է դարձել: Թերևս, ժամանակակից է նախորդին:*